




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«28» հոկտեմբերի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ  Մ. Անանյան

ԳԲԽ-108/16 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի 18.10.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Տելիա-Մեդ» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 18.10.2016թ. ներկայացված բողոքով հայտնել է, որ Ընկերությունը 12.09.2016թ. մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից հայտարարված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/21-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-

ՇՀԱՊՁԲ-4/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ հանձնաժողով)՝ 12.09.2016թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը ներառված է այն մասնակիցների ցանկում, որոնց հայտերը ներկայացվել են սահմանված կարգով և <http://www.armeps.am> էլեկտրոնային կայքի կողմից համարվել են ընդունելի հետագա գնահատման համար, իսկ նույն նիստի թիվ 3 արձանագրության 3.3. կետի համաձայն՝ «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ն կողմից ներկայացված էլեկտրոնային հայտում գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը համարվել է սխալ, մասնավորապես՝ գնային առաջարկում ներկայացված է եղել ԱԱՀ-ի սխալ հաշվարկ, հետևաբար՝ հանձնաժողովը որոշել է մերժել «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի հայտը:

«Տելիա-Մեդ» ՓԲԸ-ն իր կողմից ներկայացված հայտում գնային առաջարկի հաշվարկը կատարելիս՝ առաջնորդվել է հետևյալով. «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքներ (գործառնություններ) են համարվում՝

1) ապրանքների մատակարարումը՝ գործարք, որն իրականացվում է ապրանքների (այդ թվում՝ արտադրանքի և անշարժ գույքի) սեփականության իրավունքը որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց այլ անձի փոխանցելու միջոցով:...

2) ծառայությունների մատուցումը՝ ապրանքների մատակարարում չհամարվող գործարք (գործառնություն), որն իրականացվում է որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց, ներառյալ ոչ նյութական ակտիվների իրացումը (փոխանցումը): Ծառայությունների մատուցում է համարվում նաև ապրանքների և անշարժ գույքի վարձակալությունը.

3) անհատույց (մասնակի հատուցմամբ) սպառումը՝ սույն օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարող անձանց կողմից ապրանքների անհատույց հատկացում կամ ծառայությունների անհատույց մատուցում տվյալ անձանց կամ այլ անձանց կամ նրանց ապրանքների մատակարարում և ծառայությունների մատուցում՝ տվյալ գործարքների (գործառնությունների) համար սովորաբար կիրառվող գներից էականորեն ցածր գներով, բացառությամբ օրենքով կամ օրենքով նախատեսված դեպքերում իրավական այլ ակտով սահմանված դեպքերի.

4) «Բացթողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ապրանքների ներմուծումը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:...

5) առանց իրավաբանական անձ ձևավորելու համատեղ գործունեություն իրականացնելու համար որպես ներդրում ապրանքների մատակարարումը և ծառայությունների մատուցումը, եթե համատեղ գործունեության մասով հարկերը հաշվարկելու և վճարելու պարտավորությունները ստանձնելու մասին հայտարարություն հարկային մարմին չի ներկայացվել: Նույն կետում նշված դեպքում ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է օրենքի 8 հոդվածի 6-րդ կետին համապատասխան:

Միաժամանակ, նույն օրենքի 15-րդ հոդվածի 19-րդ կետի համաձայն՝ ԱԱՀ-ից ազատվում է դոնորային արյան, մայրական կաթի, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, բժշկական տեխնիկայի և պարագաների, բուժօգնության, բուժսպասարկման (այդ թվում կանխարգելիչ և ախտորոշման) ծառայությունների, բուժկանխարգելիչ ձեռնարկություններում ու կազմակերպություններում բուժման հետ կապված և այդ բուժօգնության շրջանակներում հիվանդների կողմից պատրաստված ապրանքների և կատարված ծառայությունների իրացումը:

«Տելիա-Մեդ» ՓԲԸ-ն նշել է, որ տվյալ պարագայում գնման առարկա է հանդիսացել հատուկ նշանակության մեքենան՝ Ֆյուրոգրաֆիկ մեքենա՝ բարձր անցողունակությամբ ավտոմեքենայի բազայի վրա, ինչը նշանակում է, որ այն բաղկացած է 2 տարրերից, որոնցից մեկը՝ Ֆյուրոգրաֆիկ մեքենան, համաձայն ՀՀ օրենսդրության, ենթակա չէ ԱԱՀ-ով հարկման, իսկ բարձրանցողունակությամբ ավտոմեքենան ենթակա է ԱԱՀ-ով հարկման: Այս ամենից ելնելով է կատարվել գնային հաշվարկը «Տելիա-Մեդ» ՓԲԸ նկերության կողմից, պարզապես, քանի որ հայտի ներկայացման էլեկտրոնային տարբերակը հնարավորություն չի տվել հայտատուին ավելացնել ևս մեկ տող՝ պահանջելով առաջարկը ներկայացնել մեկ տողով, հավանաբար, գնային առաջարկի այս հաշվարկը թյուրիմածության առիթ է հանդիսացել:

«Տելիա-Մեդ» ՓԲԸ-ն տեղեկացրել է, որ մասնակիցների գնային առաջարկների ամփոփաթերթից պարզ է դարձել, որ «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի ներկայացրած առաջարկը զգալի չափով զիջում է մյուս երկու առաջարկներին, հետևաբար ունեցել է Ընթացակարգին հաղթելու իրական հնարավորություն, եթե հանձնաժողովն առավել մանրամասն ուսումնասիրեր առաջարկված գնի հաշվարկն ու անհիմն կերպով չմերժեր այդ հայտը:

«Տելիա-Մեդ» ՓԲԸ-ն գտնում է, որ խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից՝ «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ն խնդրում է դադարեցնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/21-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.09.2016թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 3.3 կետով «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին և 4.1 կետով «ՍՊ» ՍՊԸ-ին 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին որոշումները:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

Կենտրոնը 19.10.2016թ. թիվ 01/04.1/3819-16 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունից խնդրել է բողոքը քննող հանձնաժողովի նիստին ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/21-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները և տալ կարծիք:

Պատվիրատուն ներկայացրել է Ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

3. ԳԲԽ-108/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-108/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից **հայտուկ նշանակության մեքենաի (ֆյուրորգրաֆիկ մեքենաի բարձր անցողունակությամբ ավտոմեքենայի բազայի վրա)** ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/21-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին, ի թիվս այլ ընկերությունների, հայտ է ներկայացրել նաև «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ն:

2. Հրավերի N 4 հավելված գնային առաջարկի օրինակելի ձևն է.

Չափա- բաժինների համարները	Գնման առարկայի անվանումը	Չ/Մ	Քանակ	Ինքնարժեք (Մեկ միավորի գնի մասով)	Շահույթ (Մեկ միավորի գնի մասով)	ԱԱՀ* (Մեկ միավորի գնի մասով)	Մեկ միավորի առաջարկված գինը /տառերով և թվերով/	Առաջարկված ընդհանուր /չափաբաժնի/ գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5	6	7	8=5+6+7	9=8X4
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում NI>>							
2	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում NI>>							

3. «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացված գնային առաջարկով նշել է, որ ուսումնասիրելով պատվիրատուի կողմից տրամադրված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/21-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, առաջարկում է պայմանագիրը կատարել հետևյալ գներով՝

(ՀՀ դրամ)

Չափա- բաժիննե րի համարն երը	Գնման առարկայի անվանումը	Չ/Մ	Քանակ	Ինքնարժեք (Մեկ միավորի գնի մասով)	Շահույթ (Մեկ միավորի գնի մասով)	ԱԱՀ* (Մեկ միավորի գնի մասով)	Մեկ միավորի առաջարկված գինը /տառերով և թվերով/	Առաջարկված ընդհանուր /չափաբաժնի/ գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5	6	7	8=5+6+7	9=8X4
1	Հատուկ նշանակությ յան մեքենաի (ֆյուրորգր աֆիկ մեքենաի բարձր անցողունա կությամբ ավտոմեքե նայի բազայի վրա)	հատ	2	55601356	6027187	4363771	65992314	131984628 (հարյուր երեսուն մեկ միլիոն իննը հարյուր ութսուն չորս հազար վեց հարյուր քսան ութ ՀՀ դրամ)

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.09.2016թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի N 3 արձանագրության.

- 3.3 կետի համաձայն՝ «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի գնային առաջարկի հաշվարկման ճշտության սխալ է, մասնավորապես գնային առաջարկում ներկայացված է ԱԱՀ-ի սխալ հաշվարկ: Հանձնաժողովը որոշել է մերժել «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի հայտը:

- 4.1 կետի համաձայն՝ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/21-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է 1-ին չափաբաժնով ներկայացված գնային

առաջարկների հիման վրա Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել «ՍՊ» ՍՊԸ-ին:

4. ԳԲԽ-108/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի 18.10.2016թ. ներկայացրած բողոքը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/21-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի պատճենները, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի գնի հաշվարկը պետք է ներառի տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերի, տուրքերի, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և շահույթը:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում.....:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքներ (գործառնություններ) են համարվում՝

1) ապրանքների մատակարարումը՝ գործարք, որն իրականացվում է ապրանքների (այդ թվում՝ արտադրանքի և անշարժ գույքի) սեփականության իրավունքը որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց այլ անձի փոխանցելու միջոցով:...

2) ծառայությունների մատուցումը՝ ապրանքների մատակարարում չհամարվող գործարք (գործառնություն), որն իրականացվում է որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց, ներառյալ ոչ նյութական ակտիվների իրացումը (փոխանցումը): Ծառայությունների մատուցում է համարվում նաև ապրանքների և անշարժ գույքի վարձակալությունը:

3) անհատույց (մասնակի հատուցմամբ) սպառումը՝ սույն օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարող անձանց կողմից ապրանքների անհատույց հատկացում կամ ծառայությունների անհատույց մատուցում տվյալ անձանց կամ այլ անձանց կամ նրանց ապրանքների մատակարարում և ծառայությունների մատուցում՝ տվյալ գործարքների (գործառնությունների) համար սովորաբար կիրառվող գներից էականորեն ցածր գներով, բացառությամբ օրենքով կամ օրենքով նախատեսված դեպքերում իրավական այլ ակտով սահմանված դեպքերի:

4) «Բացթողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ապրանքների ներմուծումը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:...

5) առանց իրավաբանական անձ ձևավորելու համատեղ գործունեություն իրականացնելու համար որպես ներդրում ապրանքների մատակարարումը և ծառայությունների մատուցումը, եթե համատեղ գործունեության մասով հարկերը հաշվարկելու և վճարելու պարտավորությունները ստանձնելու մասին հայտարարություն հարկային մարմին չի ներկայացվել: Սույն կետում նշված դեպքում ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է օրենքի 8 հոդվածի 6-րդ կետին համապատասխան:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 19-րդ կետի համաձայն՝ **ԱԱՀ-ից ազատվում է** դոնորային արյան, մայրական կաթի, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, **բժշկական տեխնիկայի և պարագաների**, բուժօգնության, բուժսպասարկման (այդ թվում կանխարգելիչ և ախտորոշման) ծառայությունների, բուժկանխարգելիչ ձեռնարկություններում ու կազմակերպություններում բուժման հետ կապված և այդ բուժօգնության շրջանակներում հիվանդների կողմից պատրաստված ապրանքների և կատարված ծառայությունների իրացումը:

Այսպիսով, տվյալ պարագայում գնման առարկա է հանդիսացել լրակազմը՝ հատուկ նշանակության մեքենան՝ Ֆյուրոգրաֆիկ մեքենա՝ բարձր անցողունակությամբ ավտոմեքենայի բազայի վրա: Վերոհիշյալ լրակազմի տարրերից մեկը՝ **Ֆյուրոգրաֆիկ մեքենան**, համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 19-րդ կետի, **ազատվում է ԱԱՀ-ից**, ուստի «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի կողմից Ընթացակարգին

մասնակցելու նպատակով հայտով ներկայացված գնային առաջարկի հաշվարկում՝
Ֆյուրոգրաֆիկ մեքենայի մասով, ԱԱՀ-ն չի ներառվել:


Ուսումնասիրելով Ընթացակարգին մասնակցելու նպատակով «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը, Կենտրոնն արձանագրում է, որ Ընկերությունը պահպանել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի, 37-րդ հոդվածի 1-ին մասի և «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 19-րդ կետի պահանջները, այսինքն՝ Ընկերությունը առաջարկած պայմանագրի գնի հաշվարկում ներառել է տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը):

Վերոշարադրվածի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, խախտելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, մերժել է «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի հայտը և ներկայացված գնային առաջարկների հիման վրա Ընթացակարգի 1-ին չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչել «ՍՊ» ՍՊԸ-ին:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի 18.10.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել. դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/21-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.09.2016թ. ժամը 11:00 թիվ 3 արձանագրության 3.3 կետով կայացված «Տելիա-Մեդ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը և 4.1 կետով «ՍՊ» ՍՊԸ-ին Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող ճանաչելու մասին որոշումը:


«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Գնումների աջակցման և իրավական
 խորհրդատվության վարչության պետ՝



Լ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
 ահազանգման բաժնի գլխավոր
 մասնագետ՝ ԳԲԽ-108/16 բողոքը
 քննող հանձնաժողովի քարտուղար՝



Լ. Հովակիմյան